Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2018 թվականի մարտի 5-ի նիստում,
արձանագրություն N 5,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ.Լ.Աթոյան
«05» 03 2018 թ.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Հեղինակներ՝

տ.գ.թ., դոցենտ Պ. Ա. Քալանթարյան

տ.գ.թ., դոցենտ Կ. Հ. Գրիգորյան

տ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Նազարյան

Սույն մեթոդական ցուցումները մագիստրոսական թեզ կատարելու, ղեկավարելու և պաշտպանելու գործընթացը կազմակերպելու և իրականացնելու ուսումնամեթոդական ուղեցույց է: Այն նախատեսված է համալսարանի մագիստրատուրայի ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, մագիստրոսական թեզի գրախոսների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

   2.1. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը

   2.2. Մագիստրոսական թեզի ղեկավարի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները

   2.3. Մագիստրոսական թեզի կառուցվածքը և շարադրանքը

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

   3.1. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը

Օգտագործված գրականության ցանկ

Հավելվածներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Մագիստրոսական թեզի կատարումն ու պաշտպանությունը ուսանողի ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների ապացույցն է:

1.2. Ուսանողը մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանության թույլատրվում է տվյալ կրթական ծրագրով մինչև մագիստրոսական թեզի պաշտպանությունը նախատեսված կրեդիտները հավաքելու դեպքում: Մասնագիտության կրթական ծրագիրը չիրականացնելու (նախատեսված կրեդիտները չհավաքելու) դեպքում ուսանողը զրկվում է մագիստրոսական թեզի պաշտպանության իրավունքից: Այդ դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում առնվազն մեկ տարի հետո վերականգնվել ավարտական կուրսում և կատարել մագիստրոսական թեզ՝ նոր թեմայով:

1.3. Մագիստրոսական թեզ կատարելու նպատակն է խորացնել ուսանողի ստացած տեսական և գործնական գիտելիքները, զարգացնելու ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու ունակությունները և տիրապետելու հետազոտությունների մեթոդներին:

1.4. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունը ուսանողի մասնագիտական կրթության ամփոփիչ ատեստավորման փուլն է: Մագիստրոսական թեզն այլ գիտական աշխատանքներից տարբերվում է նրանով, որ ունի որակավորման գործառույթ՝ հրապարակային պաշտպանության միջոցով մագիստրոսի աստիճան ստանալն է:

1.5. Մագիստրոսական թեզն ինքնուրույն աշխատանք է: Առանց հեղինակին հղում կատարելու ուրիշի արտահայտած գաղափարը և կատարած հետազոտության արդյունքները որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելը գրագողություն է: Այդ ակադեմիական կարգապահական նորմի պահպանումը պարտադիր է:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը

2.1.1. Մագիստրոսական թեզերի թեմաները առաջադրում են տվյալ կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կամ ամբիոնների դասախոսները: Թեմաների վերջնական ցանկը հաստատվում է ամբիոնի նիստում կամ ամբիոնների համատեղ նիստում, եթե տվյալ կրթական ծրագիրն իրականացնում են մեկից ավելի ամբիոններ: Ուսանողը կարող է առաջարկել թեմա՝ դրա նպատակահարմարության հիմնավորմամբ:

2.1.2. Մագիստրոսական թեզի բովանդակությունը պետք է համապատասխանի տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

2.1.3. Մագիստրոսական թեզերի թեմաների ցանկն ուսանողներին առաջարկվում է առկա մագիստրատուրայի երկրորդ և հեռակա մագիստրատուրայի երրորդ կիսամյակի առաջին ամսվա ընթացքում: Առաջարկվող թեմաների քանակը առնվազն 20 տոկոսով պետք է գերազանցի մագիստրոսական թեզ կատարողների թվին և չկրկնի նախորդ երեք տարվա թեմաները:

2.1.4. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրության համար ուսանողը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին (տե՛ս հավելված N 1):

2.1.5. Ընտրված թեմաների ցանկը (ըստ ուսանողների և թեզի ղեկավարների) նախ հաստատվում է ամբիոնի, այնուհետև՝ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Թեման հաստատվում է միայն համապատասխան ղեկավար ապահովելու դեպքում:

2.1.6. Թեմաների հաստատված ցանկերի մեկական օրինակ պահվում է ամբիոնում, դեկանատում և ուսումնական բաժնում:

2.1.7. Ղեկավարի կամ մագիստրոսական թեզի թեմայի փոփոխություն թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում (օրինակ՝ ղեկավարի երկարատև գործուղում, ուսումնական տարվա ընթացքում աշխատանքից ազատում, երկարատև հիվանդություն, իսկ թեմայի փոփոխություն՝ համապատասխան հիմնավորվածության առկայության դեպքում):

2.1.8. Առկա ուսուցման երկտարեցի ուսանողները թեմայի ընտրության, ղեկավարի նշանակման, թեմայի կատարման և պաշտպանության թույլտվության իրավունք ձեռք են բերում տվյալ ուսումնական տարվա **առաջին** ամսվա ընթացքում, իսկ հեռակա ուսուցման ուսանողները՝ ամփոփիչ ատեստավորման տարվան նախորդող ուսումնական տարվա **երկրորդ** կիսամյակի առաջին ամսվա ընթացքում՝ համալսարանի ռեկտորին դիմելու և համապատասխան վճարումներ կատարելու դեպքում:

2.1.9. Մագիստրոսական թեզը կատարվում և վերահսկվում է հետևյալ հիմնական փուլերով՝

- մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն և հաստատում,
- աշխատանքների կատարման ժամանակացույցի կազմում,
- թեզի թեմային առնչվող գրականության ուսումնասիրություն և ընտրություն,
- թեզի բովանդակության (պլանի) կազմում,
- հաշվարկների համար վիճակագրական նյութերի և ելակետային տվյալների հավաքագրում, աղյուսակների, գծապատկերների և գծանկարների կառուցում,
- մագիստրոսական թեզի ձևավորում (էջերի, գլուխների, աղյուսակների, գծանկարների, գծապատկերների համարակալում, տեքստի տպագրություն և տպագրված թեզի կազմում),

- մագիստրոսական թեզի նախնական պաշտպանություն՝ ամբիոնի հայեցողությամբ,
- մագիստրոսական թեզի ներկայացում ամբիոն՝ ղեկավարի կարծիքի հետ,
- մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանություն:

2.1.10. Մագիստրոսական թեզի կատարման հիմնական փուլերի ժամկետներն են՝

- աշխատանքային պլանի պատրաստում՝ թեմայի ընտրությունից հետո առավելագույնը **մեկ ամսվա** ընթացքում,
- մագիստրոսական թեզի մասերի ներկայացման վերջնաժամկետները՝ համաձայն ժամանակացույցի,
- մագիստրոսական թեզի նախնական պաշտպանություն՝ հրապարակային պաշտպանությունից առաջ,
- ղեկավարի կարծիքի հետ մագիստրոսական թեզի ներկայացում ամբիոն՝ պաշտպանության օրվանից առնվազն 25 աշխատանքային օր առաջ,
- գրախոսության ներկայացում ամբիոն՝ պաշտպանության օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

2.2. Մագիստրոսական թեզի ղեկավարի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները

2.2.1. Ամբիոնը նշանակում է մագիստրոսական թեզի ղեկավար՝ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից:

2.2.2. Ղեկավարը հաստատում է ուսանողի և ղեկավարի համատեղ աշխատանքի կարգն ու ժամանակացույցը, ավարտուն աշխատանքը ներկայացնելու, նախնական և հրապարակային պաշտպանություն կազմակերպելու ժամկետները:

2.2.3. Մագիստրոսական թեզի պատրաստման ընթացքում ղեկավարը պարտավոր է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- թեմայի շրջանակներում ուսանողին ուղղորդել անհրաժեշտ մասնագիտական գրականության և տվյալների աղբյուրների ընտրության հարցերում,
- պարբերաբար և համակարգված խորհուրդներ տալ ուսանողին և վերահսկել նրա կատարած աշխատանքները,
- գնահատել կատարված աշխատանքի համապատասխանությունը մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին (ինչպես մաս-մաս, այնպես էլ որպես մեկ ամբողջություն),
- գրավոր կարծիք տալ թեզը հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ,

- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում զեկույցի նախապատրաստման ընթացքում ուսանողին տրամադրել խորհրդատվություն:

2.2.4. Ուսանողի և իր կատարած աշխատանքների ընթացքի, այդ թվում՝ ժամանակացույցի պահպանման վերաբերյալ ղեկավարը պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում ամբիոնի նիստերում:

2.2.5. Ղեկավարը ներկայացնում է գրավոր կարծիք (2-3 տպագիր էջ), որտեղ նշվում է կատարված աշխատանքի համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրի պահանջներին, հակիրճ ներկայացնում է թեզի կառուցվածքն ու բովանդակությունը, դրա արդիականությունը, տեսական մակարդակն ու գործնական կարևորությունը, առաջադրված խնդիրների լուծման խորությունն ու յուրահատկությունը, կատարված աշխատանքի ինքնուրույնության աստիճանը, գրականության օգտագործման աստիճանը, ինչպես նաև տալիս է եզրկացություն՝ հրապարակային պաշտպանությանը թեզի պատրաստ լինելու կամ չլինելու վերաբերյալ:

2.2.6. Մագիստրոսական թեզի վերաբերյալ ղեկավարի բացասական կարծիքի դեպքում թեզը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության:

2.2.7. Ղեկավարը պատասխանատվություն է կրում սահմանված ժամկետում և սույն մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան մագիստրոսական թեզ ներկայացնելու համար:

2.3. Մագիստրոսական թեզի կառուցվածքը և շարադրանքը

2.3.1. Մագիստրոսական թեզը պետք է ունենա տեսական, վերլուծական, հետազոտական և գործնական բաղադրիչներ, լինի ավարտուն հետազոտություն՝ փաստելով հեղինակի մասնագիտական պատրաստվածության մակարդակը: Այն պետք է ունենա առաջադրված նպատակներին և խնդիրներին համապատասխան կառուցվածք:

2.3.2. Մագիստրոսական թեզը շարադրվում է տպագիր, որի ծավալը կարող է տատանվել 70-80 էջի սահմաններում, իսկ տեսական բնույթի թեմաների դեպքում՝ մինչև 90 էջ, էջում՝ 28-32 տող, տառատեսակը՝ Unicode, օտարալեզու շարադրանքը՝ Times New Roman, տառաչափը՝ 12, տողերի միջակայքը՝ 1,5, էջի աջ կողմից՝ 10 մմ լուսանցք, ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Էջերի համարակալումը՝ ներքևում՝ աջից: Տիտղոսաթերթը չի համարակալվում: Տեքստը շարադրվում է A4 չափի սպիտակ թղթի մի կողմի վրա:

2.3.3. Աշխատանքում մեջբերումները, հղումներն ու վկայակոչումները (ծանոթագրությունները) պետք է նշվեն տողատակին (հեղինակի ազգանունը և անունը, աշխատության անվանումը, հրատարակման վայրը,

հրատարակչությունը, տարեթիվը և էջը կամ էջերը)՝ միջանցիկ համարակալմամբ: Էլեկտրոնային նյութերից մեջբերումներ կատարելիս հարկավոր է նշել ոչ միայն տվյալ կայքի հասցեն, այլ նաև այն էջը, որից կատարվել է մեջբերումը կամ հղումը: Յուրաքանչյուր գլխի շարադրանքը սկսվում է նոր էջից:

2.3.4. Աղյուսակների տեղաբաշխումը կախված է դրանց ծավալից: Ծավալուն աղյուսակները տեղադրվում են հավելվածում, իսկ փոքրերը՝ տեքստում: Յուրաքանչյուր աղյուսակ ունենում է անվանում, չափի միավոր և համար: Գծապատկերներն ու գծանկարները ներկայացվում են ինքնուրույն համարակալմամբ, որոնցից յուրաքանչյուրը նույնպես ունենում է անվանում և համար:

2.3.5. Մագիստրոսական թեզի կառուցվածքի հիմնական տարրերն են (ըստ հերթականության)՝

- տիտղոսաթերթ,
- բովանդակություն,
- ներածություն,
- հիմնական գլուխներ,
- եզրակացություններ և առաջարկություններ,
- օգտագործված գրականության ցանկ,
- հավելվածներ:

2.3.6. Սահմանված կարգով լրացված տիտղոսաթերթը աշխատանքի առաջին էջն է (տես՝ հավելված N 2):

2.3.7. Հրապարակային պաշտպանության ներկայացվող թեզը հաստատվում է ուսանողի, ղեկավարի և ամբիոնի վարիչի ստորագրություններով:

2.3.8. Տիտղոսաթերթին հաջորդում է բովանդակությունը, որտեղ արտացոլվում են աշխատանքի բոլոր բաժինները, այդ թվում՝ գրականության ցանկը և հավելվածները: Բովանդակությունում նշվում են բաժինների սկսվող էջերը: Բովանդակության վերնագրերը պետք է կրկնեն տեքստի վերնագրերը:

2.3.9. Մագիստրոսական թեզի բովանդակության ձևակերպումը համեմատաբար ճկուն է: Սովորաբար այն կազմված է սյունակում տեղադրված խորագրերի ցանկից, որոնք կապված են հետազոտվող թեմայի ներքին տրամաբանությամբ: Սկզբնական շրջանում աշխատանքի բովանդակությունը կարող է ընդհանուր գծերով բնութագրել հետազոտման առարկան, հետագայում այն ճշգրտվում է՝ առանց աշխատանքի հիմնական խնդիրը փոփոխելու: Թեզի բովանդակությունը կազմելուց հետո ուսանողը հստակեցնում է կատարվելիք աշխատանքների տրամաբանական հաջորդականությունը:

2.3.10. Ներածությունում հիմնավորվում են ընտրված թեմայի արդիականությունը, դրա տեսական և գործնական կարևորությունը, ձևակերպվում են

աշխատանքի նպատակները և ներկայացվում են դրանց հասնելու և լուծման ենթակա խնդիրները, նշվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության ընտրված մեթոդը (մեթոդները), ստացված արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը և աշխատանքի կառուցվածքը:

2.3.11. Մագիստրոսական թեզի կատարման կարևոր փուլերից է հետազոտության մեթոդների ընտրությունը: Ուսանողն օգտագործում է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ տվյալ բնագավառի առանձնահատուկ մեթոդները՝ հիմնավորելով դրանց օգտագործման նպատակահարմարությունը: Աշխատանքի բովանդակության հիմքում դրվում է նոր նյութ՝ ընդգրկելով նոր գործոններ, օրինաչափություններ և երևույթներ կամ նախապես հայտնի դրույթների նկատմամբ այլ դիրքորոշում՝ այլ տեսանկյունով:

2.3.12. Ներածությունում տրվում են նաև տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրները: Հետազոտության տեսամեթոդաբանական աղբյուրներ են իրավական ակտերը, մասնագիտական գրականությունը, վիճակագրական նյութերը, տարբեր կազմակերպությունների հաշվետվությունները, սեփական ուսումնասիրությունները, սոցիոլոգիական հարցումները, տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրները և այլն:

2.3.13. Թեզը պետք է հիմնված լինի միայն գիտական փաստերի վրա, որոնք բնորոշվում են ճշգրտությամբ, օբյեկտիվությամբ և հավաստիությամբ:

2.3.14. Մագիստրոսական թեզի բովանդակությունը համակարգված տեսքով ներկայացնում է ինչպես գիտական ուսումնասիրության մուտքային նախադրյալները, այնպես էլ դրա կատարման ողջ ընթացքն ու ելքային արդյունքները: Մագիստրոսական թեզում կատարվում է գիտական փաստերի բազմակողմանի վերլուծություն, դիտարկվում է նմանատիպ իրադրությունների առկայությունը և հնարավոր տարբերակներից հիմնավորվում է մեկի ընտրությունը: Թեզի հիմնական մասում մանրամասն ուսումնասիրվում են հետազոտության մեթոդաբանությունն ու տեխնիկան, ընդհանրացվում են արդյունքները:

2.3.15. Ընտրված թեմայի մշակվածության աստիճանը ներկայացնելու համար տրվում է տվյալ հարցին առնչվող գրականության ամփոփումը, որտեղ ներկայացվում է թեմայի ուսումնասիրվածության գնահատականը (թեմայի վերաբերյալ ներկայացված գրականության ամփոփումը ցույց է տալիս ուսանողի՝ մասնագիտական գրականության հետ հիմնավոր ծանոթացման աստիճանը, աղբյուրների համակարգման, դրանց ուսումնասիրման և քննական վերլուծության, էականի առանձնացման, այլ հետազոտողների կողմից նախկինում կատարվածը գնահատելու, թեմայի ուսումնասիրման ներկայիս վիճակում գլխավորը որոշելու նրա ունակությունները):

2.3.16. Թեզի գլուխների բովանդակությունը պետք է համապատասխանի թեմային և լիովին բացահայտի առաջադրված խնդիրները: Դա ցույց է տալիս նյութը սեղմ, տրամաբանորեն և փաստարկված ներկայացնելու (շարադրելու) ուսանողի կարողությունները:

2.3.17. Յուրաքանչյուր գլուխ պետք է պարունակի առնվազն 2 պարագրաֆ, որոնք համարակալվում են 1.1., 1.2., ... կամ 2.1., 2.2., ... և այլն:

2.3.18. Գլուխներից առաջինը սովորաբար ունենում է տեսական բնույթ, իսկ մյուսները՝ վերլուծական և կիրառական: Գլուխներն ու պարագրաֆներն ավարտվում են համառոտ ամփոփումով և եզրակացություններով:

2.3.19. Առաջին գլխում քննարկվում են թեմայի էությունը բացահայտող տեսական և մեթոդաբանական բնույթի հարցերը, վերլուծվում են հայրենական և օտարերկրյա հեղինակների մոտեցումները: Այդ դեպքում առանցքային են հասկացությունների, տնտեսական կապերի և օրենքների ճիշտ մեկնաբանություններն ու գիտական հիմնավորումները: Մասնագիտական գրականության մեջ առկա իրարամերժ տեսակետների պարագայում անհրաժեշտ է ծավալել բանավեճ՝ առաջ քաշելով սեփական մոտեցումը կամ հիմնավորելով տեսակետներից մեկը:

2.3.20. Երկրորդ գլխում, որպես կանոն, վերլուծվում է հավաքված տեղեկատվությունը՝ ներառյալ վիճակագրական տվյալները, փաստերն ու իրադարձությունները: Երկրորդ գլխի շարադրանքում հարկավոր է ներկայացնել աղյուսակներ, գծապատկերներ և գծանկարներ: Քանակական ցուցանիշների վերլուծությունը պետք է իրականացվի տնտեսամաթեմատիկական և վիճակագրական գործիքակազմի, սոցիոլոգիական հարցման մեթոդների օգնությամբ:

2.3.21. Երրորդ գլխում առաջարկվում են բացահայտված հիմնախնդիրների լուծման ուղիները, նշվում են դրանց զարգացման այլընտրանքային տարբերակներն ու հնարավորությունները:

2.3.22. Անհրաժեշտության դեպքում թեզի կառուցվածքը կարող է ընդգրկել նաև լրացուցիչ գլուխներ՝ նվիրված ծրագրային և (կամ) իրավական ապահովմանը: Թեզն ավարտվում է «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնով: Այն ոչ թե կատարած հետազոտությունից ստացված արդյունքներից ուղղակի մեջբերումներ են, այլ դրանց սինթեզված ամփոփում, որը կատարված աշխատանքի ընդհանրացված գնահատականն է:

2.3.23. Դրանից հետո ներկայացվում է օգտագործված գրականության ցանկը (նվազագույնը 30 անուն), որի առնվազն 70 տոկոսը պետք է արտացոլված լինի աշխատանքում: Գրականության ցանկում սկզբից ներկայացվում են իրավական ակտերը, այնուհետև հայերեն գրականությունը՝ ըստ հեղինակների ազգանվան այբբենական հերթականության, օտարալեզու

գրականությունը՝ նույն տրամաբանությամբ: Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Նույն հեղինակի աշխատանքները դասավորվում են ըստ տարեթվերի աճման կարգի կամ ըստ շարադրանքի մեջ հղումների հերթականության: Գրականության ցանկում գրվում է աշխատանքի լրիվ անվանումը, դրվում է բաժանիչ՝ // նշանը, նշվում է հրատարակչությունը, հրատարակման տեղը, տարեթիվը, էջերի ընդհանուր թիվը:

2.3.24. Աշխատանքը ծանրաբեռնող լրացուցիչ և օժանդակ նյութերը ներկայացվում են հավելվածներում: Հավելվածը վերնագրվում և համարակալվում է առանց էջակալման:

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մագիստրոսական թեզի նախնական պաշտպանությունը կազմակերպում է ամբիոնը՝ իր հայեցողությամբ, ոչ պարտադիր:

3.2. Մագիստրոսական թեզի նախնական պաշտպանության նպատակը հրապարակային պաշտպանությանը ուսանողներին նախապատրաստելն է:

3.3. Մագիստրոսական թեզի նախնական պաշտպանության ժամանակ աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 15 րոպե ժամանակ:

3.4. Նախնական պաշտպանության ժամանակ ղեկավարը ստուգում է թեզի վերաբերյալ ելույթի կառուցվածքն ու բովանդակությունը, ելույթի համապատասխանությունը թեզի բովանդակությանը, ներկայացման եղանակը, որակը և ժամանակի կառավարումը:

3.5. Նախնական պաշտպանությունը գնահատվում է ըստ պատրաստվածության մակարդակի ընդհանուր բնութագրի և գիտելիքների որակի:

3.6. Մագիստրոսական թեզը պատրաստ չլինելու դեպքում ուսանողին ժամանակ է տրվում բացահայտված թերությունները վերացնելու համար՝ չխախտելով 2.1.10-րդ կետով սահմանված պաշտպանության գործընթացի ժամկետները:

3.7. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունը կազմակերպում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը՝ ըստ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի ընթացակարգի»:

3.8. Թեզի հրապարակային պաշտպանության ժամանակ աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 15 րոպե ժամանակ:

3.9. Ուսանողին հանձնաժողովի անդամների կողմից հարցեր տրվում են ելույթից հետո՝ մինչև 15 րոպե:

3.10. Հանձնաժողովի հարցերին պատասխանելուց հետո ընթերցվում են մագիստրոսական թեզի գրախոսի գրախոսությունը:

3.11. Մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ ըստ համալսարանում ընդունված գնահատման սանդղակի: Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

3.12. Դրական գնահատված մագիստրոսական թեզերը պաշտպանության օրվանից հետո 3 տարի ժամկետով պահպանվում են համալսարանի արխիվում:

14.04.2021 արձանագրություն N 9	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» փոփոխություն կատարելու մասին:
12.04.2019 արձանագրություն N 10	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՕ-297, ՀՀՊՏ 1999.05.14/12(78):
2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՕ-62-Ն, ՀՀՊՏ 2005.01.31/8(380):
3. ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N1197-Ն հրաման (պետական գրանցում 01.12.2011 կոդ՝ 11011506):
4. ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» 2011 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրաման (պետական գրանցում 27.12.2011 կոդ՝ 11011570):
5. ՀՊՏՀ մագիստրատուրայում կրեդիտային հենքով ուսուցման կազմակերպման կարգ:
6. Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ:
7. Գրիգորյան Կ. Հ., «Մագիստրոսական ատենախոսության կատարման և պաշտպանության կազմակերպման մեթոդական ցուցումներ», ուսումնամեթոդական ուղեցույց, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևան, «Տնտեսագետ», 2011, էջ 1-32:
8. Дондокова Е.Б., Цыбенов Б.Д., Дипломная работа. Методика написания и правила оформления. Улан-Удэ: Изд-во ВСГТУ, 2004, 30 с.
9. Кузин Ф.А., Магистерская диссертация. Методика написания, правила оформлении и процедура защиты. Практическое пособие для студентов-магистрантов. 2-е изд., перераб. и доп., М., "Ось-89", 1999, 304 с.
10. http://www.wikihow.com/Write-a-Master's-Thesis
11. http://www.gwr.arizona.edu/writingproposal1.htm
12. http://ifsh.de/pdf/studium/Thesis-Guide.pdf
13. http://www.sml.hw.ac.uk/postgraduate/downloads/dissertations/dissertationguide.pdf
14. http://www.utexas.edu/ogs/pdn/pdf/format_guidelines-m.pdf

Հավելված N 1

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի _____
ամբիոնի վարիչ պարոն (տիկին) _____
_____ մասնագիտության
_____ կրթական ծրագրի
առկա (հեռակա) ուսուցման
մագիստրատուրայի առաջին (երկրորդ)
կուրսի ուսանող (ուհի)
_____
Հեռ. _____
Էլեկտրոնային հասցեն՝ _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ հաստատել մագիստրոսական թեզի թեման հետևյալ վերնագրով՝ «_____»:

Դիմող՝ (անուն, ազգանուն, հայրանուն)
(ստորագրություն)

_____ _____ 20 _____ թ.

Հավելված N 2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

Թեմա՝

Ֆակուլտետ՝

Ամբիոն՝

Մասնագիտությունը՝

Կրթական ծրագիրը՝

Ամբիոնի վարիչ՝

Ղեկավար՝

Երաշխավորվում է պաշտպանության՝

Կատարող՝

Երևան – 20 ____

Հավելված N 3

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

«_____» մասնագիտության «_____»

կրթական ծրագրի առկա (հեռակա) ուսուցման մագիստրատուրայի 2-րդ (3-րդ) կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության ամփոփիչ հանձնաժողովի անդամի գնահատման թերթիկ

N	Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Մագիստրոսական թեզի թեմայի վերնագիրը	Գործոնների կշիռը*				
			I	II	III	IV	Միջին

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ՝

* Ծանոթություն:

I. աշխատանքի բովանդակությունը, 15 %

II. աշխատանքի ինքնուրույնության աստիճանը, 15 %

III. աշխատանքի ներկայացման որակը, 35 %

IV. տրված հարցերի և դիտողությունների պատասխանների ամբողջականությունը և խորությունը, 35 %